

ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ՀԱՅԵՐՈՒ

Թուրք ֆաշիստներու՝ «Թուրք վրիժառուներու գունդ» կոչուող խմբաւորումը սպառնական նամակ ուղարկած է թրքական «էվրենսել» թերթի խմբագրութեան, կոչ ընելով հայերուն, քուրտներուն եւ շարք մը ալլախոհ թուրք գործիչներու՝ մինչեւ Օգոստոս 15-ը հեռանալ Թուրքիայէն, ալլապէս՝ կը խոստանայ անցնիլ արիւնոտ գործողութիւններու:

Թուրք ֆաշիստներու տարածած բաց նամակի մէջ պահանջագիր ներկայացուած է «էվրենսել» եւ «Ակոս» թերթերու աշխատակիցներուն, «Ներեցէք մեզ, հայեր» շարժումի կազմակերպիչ Պասքըն Օրանին, քուրդ կին պատգամաւոր Սեպահաթ թուրքիւն, Ահմեդ թուրքին եւ Դիարբեքիւրի քաղաքապետ Օսման Բայրեմիւրին:

Նամակի մէջ ըսուած է թէ, Հայկական Սփիւռքը ու անոր կողմնակիցները առանց որեւէ պահանջի, անվերադարձ պէտք է լքեն Թուրքիան:

Այս նամակին հետ կապուած յայտարարութիւն մը տարածած է «էվրենսել» խմբագիր Ֆաթիհ Փոլաթ, շեշտելով, որ էրզուրամի կուսակցութիւնը պատասխանատու պիտի նկատուի հետեւանքներուն համար:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԴԺԳՈՐ՝ ԿԱԶԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԱՐԴԻՒՆՔԷՆ

Միացեալ Նահանգներու Պետական Գրասենեակը հիասթափութիւն յայտնեց, Յունիս 24-ին Ռուսական կազան քաղաքին մէջ կայացած Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու եռակողմ հանդիպման արդիւնքներուն առթիւ: Այս մասին արտայայտուեցաւ ԱՄՆ-ի Պետական Գրասենեակի խօսնակ Վիթթորիա Նիւլընտ, Երկուշաբթի Յունիս 27-ի ասուլիսի ժամանակ:

«Ինչպէս գիտէք, կազանի մէջ կայացած հանդիպման ժամանակ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները չկարողացան համաձայնութեան գալ՝ հիմնարար սկզբունքներու շուրջ: Այնուհանդերձ, նախագահ Տմիթրի Մեդվեդեւի հետ համատեղ յայտարարութեան մէջ անոնք յայտնեցին, որ փոխըմբռնում ձեռք ձգուած է շարք մը հարցերու շուրջ, համաձայնած են շարունակել աշխատանքը հիմնարար սկզբունքներու վրայ եւ շարունակել հանդիպումները: Բայց ես կ'ըսէի՝ այս հիասթափեցնող է»:

Միւս կողմէ, Ռուսաստանեան որոշ թերթեր կը յայտնեն, որ նախագահ Մեդվեդեւ վերջնագիր



Սերժ Սարգսեան, Տմիթրի Մեդվեդեւ եւ Իլհամ Ալիեւ կազանի մէջ

ներկայացուցած է իր հայ եւ ատրպէյճանցի պաշտօնակիցներուն՝ սպառնալով, որ այլեւս պիտի չզբաղուի դարաբաղեան հարցի լուծմամբ:

Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան բարձրաստիճան ներկայացուցիչը «Կո-

մերսանտ» թերթին փոխանցած է, որ կազանի հանդիպման ժամանակ, բաւական անսպասելիօրէն ի յայտ եկան այնպիսի տարածայնութիւններ, որոնք կողմերը շատոնց յաղթահարուած կը համարուէին:

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԱԾ ԶԷ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄՏԱՑԱԾ C-300 ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՎ



C-300 հակաօդային պաշտպանութեան համալիրը

Հայաստանի պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տօնոյեանի յայտնեց, որ Ատրպէյճանի տրամադրութեան տակ եղած հակաօդային պաշտպանութեան ուսաստանեան C-300 «Ֆաւորիտ» գննիթահարթիւնային համալիրը ոչ մէկ ձեւով պիտի ազդէ հայ-ատրպէյճանական ռազմական փոխդասաւորուածութեան վրայ:

«Առկաջ ռազմական փոխդասաւորուածութեան վրայ այդ համալիրը ոչնչով չի ազդելու եւ Ատրպէյճանին որեւէ ռազմավարական առաւելութիւն չի տալիս», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին ըսաւ

Տօնոյեան՝ շարունակելով. - «Ինչ վերաբերուած է օրինակ, Ատրպէյճանի կողմից հաւանական ռազմական գործողութիւնների վերսկսմանը, ապա այդ դէպքում, կարծում եմ, Ատրպէյճանը պէտք է պատրաստ լինի ռազմական գործողութիւնները վարել նաեւ սեփական տարածքում, որոնց ժամանակ C-300 համալիրը դժուար թէ էական աջակցութիւն ցուցաբերի»:

Նշուած համալիրը ցուցադրուել էր Կիրակի, Յունիս 26-ին Պաքուի մէջ կայացած գորահանդէսի ժամանակ:

«Կարծում եմ, որ Ռուսաստա-

Շաբ.ը էջ 5

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ



Նախապէս եղած ժամադրութեան համաձայն, Երկուշաբթի Յունիս 20-ին, երեկոյեան ժամը 7ին, Իրանահայ Միութեան Կլենտէյլի կեդրոն այցելեցին Ս.Դ.Հ. Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անդամներ Վազգէն Խոստանեանը, Գաբրիէլ Մոլոյեանը, Սուրբէն Խուրանեանը եւ Լենա Մանուկեանը:

Նորակառուց ակումբի մուտքին հիւրերը դիմաւորուեցան Իրանահայ Միութեան ինքնակալ մարմնին, կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներու եւ տարբեր բաժանմունքներու պատասխանատուներու կողմէ: Պաշտօնական ծա-

նօթացումներէ յետոյ հիւրերը շրջեցան շքեղ կառուցի երեք յարկերը: Դիտեցին գրասենեակները մեծ ու փոքր սրահները եւ այլն: Այս առթիւ կազմակերպուած էր թէյսեսեղան ի պատիւ այցելուներուն: Խօսք առնելով ինքնակալ մարմնի անդամ Թոմիկ Ալեքսանեանը իր ինդակցութիւնը յայտնեց այս գեղեցիկ առիթի համար եւ բոլոր ներկաները ծանօթացուց հիւրերուն, նշեց իւրաքանչիւրի ներդրումը Իրանահայ Միութեան բաժանմունքներէն ներս:

Խնամակալ մարմնի նախա-

Շաբ.ը էջ 4

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. ՎԵՐՋԻ ՍԿԻՉԲԸ

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Ղարաբաղեան կարգաւորման թեմայով բարձր մակարդակի ցանկացած հանդիպում ուղեկցուած է արդէն պարտադիր դարձած, ինչ-որ տեղ՝ նոյնիսկ ծիսակարգ չի չեցնող ակցիաներով: Նախ՝ հանդիպումից մի քանի օր առաջ հնարաւոր բոլոր կուսակցութիւնները, կազմակերպութիւնները, պատերազմի վետերանները միաւորուեցին ու այլ կառույցներ հայրենասիրական յայտարարութիւններ են անում եւ յոյս յայտնում, որ նախագահը ոչ մի անընդունելի փաստաթուղթ չի ստորագրի, բայց հենց որ այդ նոյն նախագահը նստում է ինքնաթիռ ու մեկնում հանդիպման վայր՝ իսկոյն յայտարարութիւնների նոր ալիք է բարձրանում, թէ հարա, հասէք, Սերժ Սարգսեանին ճշում են, բայց մենք «գլխանց» ասում ենք՝ ինչ էլ ստորագրի, չենք ընդունելու: Այդ ընթացքում ՀՀԿ-ն շունչը պահած սպասում է, որ բան է, եթէ յանկարծ «չէֆն» ինչ-որ բան ստորագրի՝ իսկոյն յայտարարի, թէ դա մեր հերթական փայլուն յաղթանակն էր, իսկ եթէ չստորագրի՝ մագապուրծի ժպիտով ասի «տեսա՞ք, որ իրար կ'ընդունենք»:

Այս իրավիճակը միայն մի բան է ապացուցում՝ Հայաստան-

նում չկայ որեւէ քաղաքական ուժ կամ կազմակերպութիւն, որը Ղարաբաղի հարցում մինչեւ վերջ կը վստահի Սերժ Սարգսեանին: Եթէ նման վստահութիւն լինէր, վերջին պահին բարձրացած այս աղմուկն էլ չէր լինի. բոլորը հանգիստ կը սպասէին, թէ ինչպէս Սերժ Սարգսեանը չի՛ ստորագրելու փաստաթուղթը: Հարց է ծագում՝ բա որ Հայաստանի համար կարեւորագոյն հարցում այդ մարդուն չէք վստահում, ինչո՞ւ էք հանդուրժում նրան նախագահի պաշտօնում: Եւ երկրորդ հարցը. քանի՞ անգամ կարելի է մագապուրծ լինել եւ դա համարել մեծագոյն դիւանագիտական յաղթանակ: Ել չենք խօսում այն մասին, որ կազանում ստորագրուելիք փաստաթուղթը (մադրիդեան սկզբունքները) վաղուց հրապարակուել են, Հայաստանի իշխանութիւններն էլ յայտարարել են, որ լիովին ընդունում են դրանք: Հարց է ծագում՝ ինչպէ՞ս կարելի է քո իսկ ընդունած սկզբունքների մերժումը համարել յաղթանակ, եւ ինչո՞ւ է ԼՂՀ արագորձնախարարը միայն հանդիպման օրը յայտարարում, թէ այդ սկզբունքներն ընդունելի չեն Ղարաբաղի համար: Դէ եթէ Սերժ Սարգսեանին վստահում էք՝ էլ ինչո՞ւ էք նման բան յայտարարում, միեւնոյն է՝ Սերժ Սարգսեանը դրանք չի ընդունի:

Ի դէպ՝ ԼՂՀ իշխանութիւնների արձագանքի մասին: Այդ արձագանքը փոքր-ինչ նուազեցրեց կազանեան հանդիպման ինտրիգը եւ չի չեցրեց յայտնի անեկոտոր: Հարսանիքի յաջորդ օրը աղջկայ ծնողներն անհամբեր սպասում են, թէ երբ են իրենց հետեւից կարմիր խնձոր ուղարկելու, բայց փեսայի ծնողները դրա փոխարէն մի քանի տանձ են ուղարկում ու հետն էլ պարզաբանում. «Ճիշդն ասած՝ ձեր աղջիկը աղջիկ չէր, բայց դա մեր աղայի հէջ տանձին չէր»:

ԼՂՀ նախագահի մամուլի խօսնակը նախօրէին յայտարարել էր, թէ «բոլորն էլ հասկանում են, որ չկայ վերադարձ ո՛չ տարածքներ, ո՛չ կարգավիճակի առումով: Մնացած բոլոր հարցերը, իհարկէ, պետք է բանակցութիւնների սեղանի շուրջ լուծուեն»:

Այսինքն՝ ոչ մի տարածք չենք վերադարձնում, Ղարաբաղն այդ եօթ շրջանների հետ մնում է անկախ պետութիւն, դէ մնացած հարցերի շուրջ էլ կը բանակցենք: Պարզ ասած, թէ ինչ կը ստորագրի Սերժ Սարգսեանը կազանում՝ ԼՂՀ իշխանութիւնների հէջ վեջը չի: Իրենք «կարմիր խնձորի» ակնկալիք չունեն:

Բայց համաձայնուէք՝ էլի սիրուն բան չի ստացուել: Լեւոն Տէր-Պետրոսեանի օրօք ասուած էր, որ Հայաստանը կ'ընդունի

կարգաւորման ցանկացած տարբերակ, որն ընդունելի կը լինի Ղարաբաղի համար: Մեր հաշուով՝ Կոնգրէսն այսօր էլ է նոյն բանն ասում: Չի ասում՝ այդ սկզբունքները յաղթողական են կամ պարտաւորական, արդար են թէ անարդար, ասում է՝ մեր արձագանքը պայմանաւորուած կը լինի Ղարաբաղի արձագանքով: Իսկ իշխանութիւնների դէպքում փոքր-ինչ այլ է. Սերժ Սարգսեանը մադրիդեան սկզբունքներն ընդունում է, ԼՂՀ իշխանութիւնները չեն ընդունում: Հիմա մի պահ պատկերացնենք, թէ ՀՀԿ-ն ոչ թէ բարձրաստիճան պաշտօնեաների ակումբ է, այլ քաղաքական կուսակցութիւն: Այդ կուսակցութիւնն ինչպէ՞ս է վերաբերում այն փաստին, որ իրենք պաշտօնապէս ընդունում են այն փաստաթուղթը, որը Ղարաբաղը կտրականապէս մերժում է:

Ի դէպ, շատերի մէջ հորթաչին հրճուանք է առաջացնում այն փաստը, որ Ադրբեյջանը նոյնիսկ մադրիդեան (մեզ համար խայտառակ) սկզբունքները չի ընդունում: Իբր՝ ինչ լաւ է, որ մերժողը նրանք են: Իրականում, սակայն, դա մեզ համար ամենամտահոգիչը պիտի լինէր: Եթէ Սերժ Սարգսեանը պատրաստակամութիւն է յայտնում ինչ-որ անորոշ խոստումների դիմաց վեց շրջան յանձնել, ու Ալիեւը մերժում է, նշանակում է՝ աւելին է ուզում եւ աւելին ստանալու իրական շանսեր է տեսնում: Փաստօրէն՝ հենց այս փաստի առթիւ են հրճուած հանրապետականները:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՀԱՄԱՅՆՅԱԿԱԿԱՆ ԳՆՈՒՄԱԿԱՆ ՓՆԹՓՆԹՈՅԸ

ՍԱՄՈՒՔԷԼ ԿԼԵՄԵԱՆ

Սովորել է քան մեծ-մեծ բառերի՝ իշխանական եւ ընդդիմադիր թեւեր, դիւանագիտական առաջ-խաղացումներ, օրէնսդրական բարեփոխումներ: Առանց ամաչելու օգտագործում ենք: Մեր վարչապետը պետական բիւջէ բառն արտասանում է օրն առնուազն հինգ անգամ, ու մենք մի անգամ չենք հարցնում՝ պետական բիւջէն գոյանում է բոլորիս աշխատանքով. որ հաշուենք մեր աշխատանքի արդիւնքները՝ բիւջէ չկայ, որ հաշուենք մի երեք-չորս մարդու բանկային հաշիւները՝ մեր պետականութեան գոյութեան ողջ ժամանակահատուածի բիւջէն գերակատարուած է:

Ոնց է այդպէս լինում՝ հայկական գոյութեան յաւերժական առեղծուածն է, որը սողոսկել է առօրեայ կեանք. աշխատավարձ չկայ, սոցիալական նպաստ չկայ, սոցիալական երաշխիք չկայ, ու չկայ նաեւ հանրային սոցիալական բողոք: Անձնագրում մարդու անունն դիմաց գրուած է ՀՀ քաղաքացի, բայց ոչ քաղաքացին է տեղեակ պետութիւնից, ոչ էլ պետութիւնը քաղաքացուց. քաղաքացին գլխի ճարը տեսնում է, պետական մեքենան դրան ամէն կերպ խանգարում է:

Կան համահայկական շարժում, համահայկական խաղեր, համահայկական միութիւններ, բայց Հայաստանում այժմ ամենագորեղ երեւոյթը համահայկական գլոբալ փնթիփնթոցն է, որ ծաւալում է Երեւանում, անցնում է դաւաճներ, արձագանքում է Սփիւռքում եւ դառնում բոլորիս միաւորող ամենահզօր գործառոյթը: Այդ տարատեսակ մանր ու մեծ փնթիփնթոց-

ներին կարելի է գումարել եւս մէկը, բայց սկզբում պատասխանելով մի հարցի՝ արժանի՞ ենք մենք արդեօք պետութեան:

Դարեր շարունակ պատմութիւնը բացառաբար է պատասխանել այդ հարցին, վերջին հարիւրամեակում մեզ պետութիւն նուիրել են, մենք էլ տնօրինել ենք մեր իմացածով, աւելի շուտ մեր չիմացածով: Եւ ուրեմն, ինչ են անում պետութեանն արժանի մարդիկ.

ա/ պետութիւնը մեքենայ է, որն աշխատում է իր անդամների պրոֆեսիոնալ եւ հասարակական պատասխանատուութեան շնորհիւ: Այդ երկու պարամետրերը վերստուգում եւ վերահսկում են պետութեան կողմից, եւ այդ երկու չափումներով էլ այդ մեքենան վերահսկում է ինքն իրեն: Ասենք պրոֆեսիոնալը, որ բռնաբառում է խեղճ սպասուհիներին, վտարում է հասարակութիւնից, իսկ «ոսկի տղան» ու «լաւ մարդը», որն իր գործից գլուխ չի հանում, վտարում է պրոֆեսիոնալ դաշտից:

Հայաստանում այդ երկու չափումներն էլ մշտապէս արհամարհուած են եղել, մենք միշտ համարել ենք, որ ազգային, կրօնական կամ մէկ այլ գաղափարով միաւորուած մարդիկ ի գօրու են պետութիւն կառուցել: Ժամանակակից աշխարհում այդ ստանդարտով հիմա նոյնիսկ արհմիութիւն չեն ձեւաւորում:

Ու դրանից բխում է երկրորդ թէզը.

բ/ Անձն ու գաղափարը նոյնը չեն: Պետութիւնն ու անձը նոյնը չեն: Գաղափարն ու պետութիւնը նոյնը չեն: Համաշխարհային պետական շինութիւնն արդէն անցել է այդ բոլոր հտապները: «Պետութիւնը դա ես եմ»

լիւրովիլիոսեան յոխորտումից մինչեւ ամերիկեան պատմագրութեան միամիտ լեզուները Լինկոլնի բացառիկ անհատականութեան մասին: Այսօր ինչքան անդէմ է պետութիւնը, այնքան կաշուն է նրա հասարակութիւնը: Ի դէպ Բելգիան շուրջ մէկ տարի կառավարութիւն չունի, ու ոչ մի ողբերգութիւն չի ապրում:

Լիդերային կառույցները չեն կարող դառնալ կաշուն պետութեան հիմք, քանզի հիմնուած են կամ այդ բոլորների անդամների անձնական պատասխանատուութեան, կամ նրանց նիւթական ակնկալիքների վրայ, իսկ այդ երկու չափումներն էլ անկաշուն են, փոփոխական, հետեւաբար վտանգաւոր՝ պետական կաշունութեան համար: Ի դէպ, թէ բոլուն սէրերը, թէ ատելութիւնները, թէ ակնկալիքները քաղաքական գործընթացի արգելափակոցն են, սիրում են հայրենիքը (ցանկութեան եւ հնարաւորութեան դէպքում), պետութիւնը կառուցում են:

գ/ Մարդու անձնական բարեկեցութեան կառուցումը ձեռնտու է պետութեանը: Եթէ պետութիւնը դրան խանգարում է, դա արդէն պետութիւն չէ, դա կլան է: Պետութեան ընդհանուր բարեկեցութիւնը ձեռնտու է քաղաքացուն: Եթէ քաղաքացին դրան խանգարում է, դա քաղաքացի չէ, դա յանցագործ է:

Համահայկական փնթիփնթոցը կարող է ասել, որ սրանք այբուբենային ճշմարտութիւններ են, որոնք բոլորին յայտնի են ու ընդհանրապէս... չկայ նախկին ուսմանտիպը: Խոստովանեմ, չկայ: Ռոմանտիզմը պետական կատեգորիա չէ:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)


Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second
 Class), \$80.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail),
 \$125.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

«ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՄԻ ԱՆԳԱՍ ԷԼ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԿՈՆԳՐԵՍԻՆ».- ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայ Ազգային Կոնգրէս ընդդիմադիր դաշինքի մաս կազմող «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Ջ. Սարգսեանը Tert.am-ին տուած հարցազրոյցում կարծիք յայտնեց, որ երկխօսութեան գործընթացի մասին Սերժ Սարգսեանի անդրադարձը ոչ ամենալողողաձէն էր, ոչ էլ ամենակոշտը:



«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Ջ. Սարգսեան

«Ընդհանուր առմամբ՝ ես կարող եմ ասել, որ ՀԱԿ-ը, իշխանութեան կողմից ինչպիսի մօտեցումներ էլ լինէին, նոյնիսկ ամենաանհաւանականները, քննարկել է, որովհետեւ շատ մեծ կուսակցութիւնների դաշտ է եւ չկան հարցեր, որ կարող են առաջանալ լրագրողական դաշտում ու մեր քաղխորհրդում չեն առաջանում: Այդ հարցերն առաջանում են, քննարկւում են եւ դրանց համապատասխան մօտեցումներ գտնուում են: Ես այդ տարբերակների մէջ եղած պատասխանը չեմ համարում ամենակոշտը կամ ամենալողողաձէնը, կարող էր աւելի լողողաձէն պատասխան տալ, մի քիչ եզրեր դեռ թողել է», - յայտարարեց Արամ Սարգսեանը:

Համոզմունք յայտնեց Սարգսեանը: Յիշեցնենք, որ ՀԱԿ-ը երկխօսութեան գործընթացը սկսելու համար ներկայացրել էր հինգ հոգանոց պատուիրակութեան կազմ: Արտախորհրդարանական ընդդիմութեան երկխօսութեանն առնչուող հարցին Յունիսի 17-ին անդրադարձել էր Սերժ Սարգսեանը՝ ՀԱԿ-ին յուզող հարցերի քննարկման համար մատնանշելով Ազգային ժողովին, կառավարութեանն ու իր աշխատակազմի ղեկավարին:

Նա նշեց, որ դա իր անձնական կարծիքն է, եւ Սերժ Սարգսեանի անդրադարձի մասին Կոնգրէսի պատասխանը կը հնչի ՀԱԿ-ի Յունիսի 30-ին կայանալիք հանրահաւաքում:

«Իսկ եթէ անընդունելի բանակցութիւնների փոխարէն Հայ ազգային կոնգրէսն իրապէս պատրաստ է շարունակել երկխօսութիւնը երկրի զարգացման ուղեգծին, արտաքին ու ներքին քաղաքականութեանն առնչուող կարեւորագոյն հարցերի լայն շրջանակում եւ ցանկութիւն ունի դա իրականացնել միայն յատուկ նշանակուած մարդկանց միջոցով, ապա կողմնակի կուսակցութիւնների ներկայացուցիչները կարող են նստել քննարկումների սեղանի շուրջ: Քաղաքական կողմնակի պատրաստ է նմանօրինակ քննարկումների բոլոր քաղաքական ուժերի հետ, որոնք ունեն կոնկրետ առաջարկութիւններ», - մասնաւորապէս, յայտարարել էր նախագահը:

«Այդ հարցի ամբողջական պատասխանը կը տրուի հանրահաւաքում: Ես գտնում եմ, որ դա կարող է լինել նաեւ հանրահաւաքի ինտրիգը: Քաղաքականութիւնը տակտիկա ունի եւ այդ տակտիկական մասից ելնելով՝ գերադասում եմ այդ մօտեցումը թողնել Կոնգրէսի առաջնորդին, որը դրան կ'անդրադառնայ իր ելոյթում», - ասաց Սարգսեանը:

Ընդդիմադիր կուսակցութեան առաջնորդը համոզուած է, որ երկխօսութեան թեմային Հայաստանի նախագահն առաջիկայում կրկին կ'անդրադառնայ: «Յամենայն դէպս ես համարում եմ, որ երկխօսութեան համար դեռ ժամանակ կայ, եւ ժամանակ կայ դեռ այդ թեմային անդրադառնալու, եւ կարծում եմ՝ Սերժ Սարգսեանն այդ թեմային նորից է անդրադառնալու», -

«ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԵԾ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՂԹԻՐ ԲԱՐԳԱԲԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Եթէ խորհրդարանական ընտրութիւնները Հայաստանում կայանան արդար եւ ազատ, ապա մեծ տարբերութեամբ կը յաղթի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Մամուլի ասուլիսում նման կարծիք է յայտնել Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցութեան վերլուծական կենտրոնի ղեկավար Ստեփան Գրիգորեանը:

Միեւնոյն ժամանակ, Գրիգորեանը հակասել է իրեն, յայտարարելով, թէ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի վարած բաւական ուշադրաւ եւ յատկանշական արտաքին եւ ներքին քաղաքականութեան շնորհիւ, որը միտուած է քաղաքական դաշտում լարուածութեան նուազմանը, ժողովուրդը դժուար թէ ռիսկի դիմի եւ իր ձայնը տայ ընդդիմութեանը:

Նա ընդգծել է, թէ ներկայումս Հանրապետական կուսակցութիւնը վայելում է բնակչութեան ցածր վստահութիւնը երկրում ստեղծուած սոցիալ-տնտեսական իրավիճակի պատճառով:

«Ուստի, եթէ խորհրդարանական ընտրութիւնները Հայաստանում ընթանան առանց խախտումների, ՀՀԿ-ի ստացած

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՆ
«ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ ԶԱԽՈՂՈՒԱԾ ՉԷ»

Հայ Ազգային Կոնգրէս (ՀԱԿ) ընդդիմադիր դաշինքի մաս կազմող Հայաստանի ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) նախագահ Ստեփան Դեմիրճեանը չի համարում, թէ ամբողջութեամբ ձախողուել է արտահերթ ընտրութիւնների անցկացման շուրջ ՀԱԿ - իշխանութիւն երկխօսութեան գործընթացը:



ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեան

Դեմիրճեանի համոզմամբ՝ ժամանակ դեռ եւս կայ, եւ «իշխանութիւնները պէտք է հետեւութիւններ անեն»:

«Ես անձամբ յոյսեր չունեմ: Ես կարծում եմ, որ իշխանութիւնը քայլեր կ'անի միայն հասարակական ճնշման դէպքում», - լրագրողների հետ հանդիպմանը լաւելեց նա՝ շարունակելով. - «Արտահերթ ընտրութիւնները պէտք է պարտադրուեն մեր բոլորի կողմից, հասարակութեան կողմից»:

մասին է. - «Մարդկանց մօտ հակայական դժգոհութիւն է կուտակուել, եւ, բնականաբար, ընդդիմութիւնը կ'ուղղորդի այդ ճնշումը»:

«Երբ ասում եմ, որ դեռ եւս ժամանակ կայ, դա չի նշանակում, որ անվերջ սպասելու ենք: Ամէն ինչ իր լիմիտն ունի, ժամկէտն ունի», - յայտարարեց նա:

Հարցին, թէ ինչ է անելու ՀԱԿ-ը, երբ այդ լիմիտը վերջանայ, Դեմիրճեանը արձագանքեց, որ ուժային մեթոդների չեն դիմելու, խօսքը հասարակական ճնշման

Փաստարկելով, թէ ինչու է ընդդիմութիւնը պահանջում արտահերթ ընտրութիւններ՝ Դեմիրճեանը ընդգծեց, որ «[նախորդ] ընտրութիւնները կեղծուել են», անցած երեք տարիները ցոյց են տուել, որ «իշխող վարչախումբը ձախողուել է բոլոր բնագաւառներում», եւ մարդիկ համարում են, որ հերթական ընտրութիւնները հերթական անգամ կը կեղծուեն:

«ՀԱԿ-Ը ԿԱԶՄԱՔԱՆԴԵՑ ՈՉ ԹԷ ԱՐԱԶԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ԱՅԼ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԱՇՏԸ»

Հայ Ազգային Կոնգրէսը կազմաքանդեց ոչ թէ աւագակապետութիւնը, այլ ընդդիմադիր դաշտը: Յունիս 28-ին լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք յայտնեց ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Սաֆարեանը՝ աւելացնելով, որ եթէ ՀԱԿ-ն իրեն դոմինանտ ուժ է համարում ընդդիմութեան դաշտում, ապա պէտք է ընդունի իր դերակատարութիւնը ընդդիմադիր դաշտի կազմաքանդման գործում:



«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Սաֆարեան

«Յատկապէս վերջին շրջանում ընդդիմադիր դաշտի աւերման առումով ՀԱԿ-ի դերակատարումը նկատելի է», - ասաց նա:

Սաֆարեանը նկատեց, որ հասարակութեան մէջ «զանգուածային հրասթափութիւն» է առաջացել՝ ՀԱԿ-ի անկանխատեսելի ռազմավարութեան պատճառով:

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի վերաբերեալ: Մինչդեռ, պատգամաւորի դիտարկմամբ, այդ հարցերում հայեցակարգային նմանութիւններ ունեն ՀԱԿ-ն ու իշխանութիւնը:

Սաֆարեանը յայտնեց, որ Հայ Ազգային Կոնգրէսի հետ «Ժառանգութեան» միաւորման թեման մէկընդմիջտ փակ է: Նա ասաց, որ ժամանակը ցոյց տուեց, որ ՀԱԿ-ին չմիանալու «Ժառանգութեան» որոշման «ճիշդ եւ արդարացի լինելը» ապացուցեց ժամանակը:

Սաֆարեանի պարզաբանմամբ՝ «Ժառանգութիւն» ու Հայ Ազգային Կոնգրէսը բացարձակ տարբեր մօտեցումներ ունեն թէ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան, թէ

«Առաջիկայ ընտրութիւններում ՀԱԿ-ի հետ գաղափարական դաշինքը բացառուած է», - յայտարարեց Սաֆարեանը՝ աւելացնելով, որ առաջիկայ ընտրութիւններում ոչ գաղափարական միաւորումը եւս «այսօրուայ իրադրութեան պայմաններում դժուար թէ լինի»:

ՈՒԴԻԿ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑ ԳԱՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՇՏՕՆՈՒՄ

Յունիս 28-ին տեղի ունեցած Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովում Ռադիկ Մարտիրոսեանը վերընտրուեց ԳԱԱ նախագահի պաշտօնում:

Ընդհանուր ժողովի 151 մասնակիցներից փակ գաղտնի քուէարկութեան ժամանակ Ռադիկ Մարտիրոսեանի օգտին քուէարկել են 102-ը: Նրա մրցակից՝ ակադեմիկոս Լենայր Աղալովեանը ստացել է 34 ձայն:

ԼՈՒՐԵՐ

ԹԱՔՆՈՒԿԸ ՉԱՅԵՐԸ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ



Տիարպեֆրի իսլամացած հայերէն՝ Գաֆուր Թուրքայ

Թուրքական «Հիւրընդիմ»-ի թղթակիցը Տիարպեֆրից հարորդում է, որ շատ հայեր, ովքեր մինչեւ հիմա ներկայանում էին որպէս սուլթանի մուսուլմաններ կամ քուրդ-ալեկներ, այլեւս չեն թաքցնում, որ էթնիկ հայեր են:

«Ռասան, ինքնութիւնը եւ կրօնը տարբեր բաներ են: Ինձ մեծացրել են որպէս սուլթանի մուսուլման, սակայն ես չեմ հրաժարուում ոչ իմ անցեալից, ոչ էլ իմ մշակութից: Կրօնը կարեւոր է, բայց ես ցանկանում եմ իմանալ իմ լեզուն», ասում է Գաֆուր Թուրքայը, Տիարպեֆրի պատուարժան հայերից:

Թուրքայը միայն 15 տարեկանում է իմացել, որ իրական ազգանունը Օհանեան է: Տիարպեֆրի մուսուլման հայերը բոլորն էլ ճանաչում են իրար, ասում է նա:

«Իսլամի ընկալումը այստեղ շատ լուրջ է: Նրանք կը հանդուրժեն, եթէ ասես, որ հայ ես: Սակայն ամէն ինչ կը փոխուի, եթէ իսլամին դիպչես»: Թուրքայն ասում է, որ քրիստոնեայ հայերը մեծամտաբար են վերաբերում մուսուլման հայերին: Նրանք իրենց այնպէս են պահում, կարծես մենք այլ ընտրութիւն ունէինք: Հայկական ինքնութիւնը պէտք է հիմնուի ռասայի, ոչ թէ կրօնի վրայ: Կրօնը կարելի է ընտրել, իսկ ռասան չի կարելի, ասում է նա:

Թուրքիայի պատմական ընկերութեան նախկին նախագահ Եուսուֆ Հալաչօղլուն ասում է, որ թաքնուած հայեր կան Թուրքիայի ողջ տարածքում, եւ նրանք արդէն դադարում են թաքցնել իրենց ինքնութիւնը: Եուսուֆ Հալաչօղլուն աշխատանքից հեռացուել էր այն բանից յետոյ, երբ պնդել էր,

թէ քուրդ ալեկները ծագումով հայեր են: «Ես այս տեղեկութիւնները յայտնեցի նաեւ հանգուցեալ Հրանդ Դինքին: Ես փորձում էի ցոյց տալ, որ ենթադրաբար 1915 թ. մահացած հայերը շարունակուած են ապրել այլ ինքնութեան ներքոյ»: Նա ասում է, որ տուեալներ ունէր իրենց ինքնութիւնը թաքցնող հայերի մասին:

«Այս տեղեկատուութիւնը Միացեալ Նահանգներում եղած գրանցումներից է: Ես տուեալներ ունեմ, թէ որ գիւղերում եւ վայրերում են նրանք ապրում եւ տեղեկ եմ, թէ ինչ անուններ են կրում նրանց կլանները», ասում է Հալաչօղլուն:

Իսմետ Շահինը, ով համշէնցի գիտնական եւ քաղաքական գործիչ է, լիովին համաձայն է Հալաչօղլուի հետ, նրա կարծիքով Հալաչօղլուն վիրաւորանք է հասցնում իսլամ ընդունած հայերին, ովքեր բնակուած են Արտուինի եւ Ռիգէ գաւառներում: Նրանք իրենց համարում են համշէնցի եւ իսուսում են հայերէնի բարբառով: Համշէնահայերը պահպանում են իրենց քրիստոնէական ավանդուածները, թէեւ իրենք իրենց մուսուլման են ներկայացնում, ասում է Շահինը:

Նա նշում է, որ ինքնութիւնը փոխած հայերի թիւը կարելի է գտնել Թուրքիայի պետական արխիւներում:

Գիւնդօղանը նոյնպէս քուրդ-ալեկի է, բնակուած է Թունչէլիի գաւառում: «Չնայած Թունչէլիի թաքնուած հայերը իրենց քուրդ-ալեկ են համարում, նրանք կապեր ունեն Ստամբուլի եկեղեցիներին հետ», ասում է Գիւնդօղանը, աւելացնելով, որ ուսումնասիրութիւններ անելիս հանդիպել եւ զրուցել է ականատեսների հետ:

Ս. Դ. Յ. Կ.-Ի ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԱՅԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

գահ Դոկտ. Վահան Կրէկըրը դրուատեց Թոմիկ Ալեքսանեանի մատուցած ծառայութիւնները, մասնաւորաբար Նոր Կեդրոնի կառուցման մէջ: Հիւրերու կողմէ շնորհաւորանքի եւ շնորհակալական խօսքերով հանդէս եկան Ս.Դ.Յ.Կ. Վարիչ Մարմնի ատենապետ Վազգէն Խոտանեանը, Գաբրիէլ Մոլոյեանը եւ Սուրէն Խուրանեանը, նշելով որ նման այցելութիւններ առիթ կը հանդիսանան սերտ համագործակ-

ցութեան, որ կենսական նշանակութիւն ունին մասնաւորաբար սփիւռքի մէջ: Ապա խօսք առաւ Իրանահայ միութեան նախագահ Նժդէճ Փիրջանեանը, մաղթելով բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն յաջողութիւններ իրենց հայնապատ առաքելութեան մէջ:

Շուրջ երկու ժամ տեւող շնորհաւորական այս այցելութիւնն ավարտեցաւ բարեկամական ջերմ մթնոլորտի մէջ:

Բարի երթ Իրանահայ Միութեան:

ՌՈՒՄ ՓՈՐՉԱԳԵՏԻ ՉԱՍՈՉՄԱՍԻՎ ԿՈՂՄԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՉԱՍՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻՆ

Յայտնի ռուս փորձագէտ, ռազմավարական եւ միջազգային հետազոտութիւններու գիտաշխատող Սերգէյ Մարգետոնով անդրադարձած է Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի կազանեան հանդիպման ու արդիւնքներուն, մասնաւորապէս վերլուծելով Ռուսաստանի՝ իբրեւ միջնորդի դերը:

«Ռբանո՞վ հիմնաւորուած են կազանի արդիւնքներու նախ, անպատասխանութիւնը, ապա նաեւ Մոսկուայի տապալումը, իբրեւ բանակցութիւններու միջնորդ: Խնդիրը այն է, որ «հրաշքի ակնկալիքը» տեղեկատուական արհեստական «փրկման» արդիւնք էր, որ սկսած էր Մեծ ութնեակի մայիսեան հանդիպումէն անմիջապէս ետք: Տոբիլի մէջ ԱՄՆ-ի, Ֆրանսայի եւ Ռուսաստանի նախագահներու ընդունած յայտարարութիւնը, ինչպէս եւ վերջին երկու նման գաղաթափողութիւններուն ընդունուած յայտարարութիւնները, չեն նպաստած հակամարտութեան կարգաւորման: Անոնք աւելի շուտ անհրաժեշտ են «վերաբեռնաւորման» գործընթացին կենսականութիւնը ընդգծելու համար, սակայն կողմերը այս ընթացքին չեն դրսեւորած փոխզիջումային բանաձեւերու յանգելու պատրաստակամութիւն», - կը նշէ Մարգետոնով:

Անոր կարծիքով, սխալ է խօսիլ Ռուսաստանի՝ իբրեւ միջնորդի, դիւանագիտական ֆիւսաբոյի մասին: Առաջին հերթին Ռուսաստանի միջոցներու սահմանափակութեան պատճառով, քանի որ Մոսկուան չի կրնար վերջնական ընտրութիւն ընել Պաքուի ու Երեւանի միջեւ: Նման ընտրութիւնը լրջօրէն պիտի տկարացնէ անոր դիրքերը Կովկասի մէջ, որ կրնայ նոր մարտահրաշքներ յառաջացնել Հիւսիսային Կովկասի մէջ: Ռուսաստան ստիպուած է ոչ միայն

տատանիլ կողմերուն միջեւ, այլ նաեւ պաշտպանուիլ իր իսկ մէջը հակամարտող այդ երկիրներու լուրջ պինդէն: Խնդիրը այն է, որ կողմերը զիջումներու երթալու ու խաղաղութեան հասնելու ցանկութիւն չունին եւ կը սպասեն հակառակորդի դիրքերու տկարանալուն, իսկ ատիկա իր հերթին միջնորդներու առաջարկներու՝ գործնական լուծումներ չունենալու պատճառով է: Այդ առաջարկներուն մէջ շատ են խոչնդողն ու ոչինչով չհիմնաւորուած ակնկալիքները:

«Նաեւ, վերջին ինը հանդիպումներուն համար Ռուսաստան միայնակ պատասխանատուութիւն չի կրեր: Այդ գծով աջակցած է Արեւմուտքը: Այո, Ռուսաստանի համար վատ եղաւ, սակայն ո՞վ կարողացաւ 1994ին դադրեցնել պատերազմը, իսկ 2008ին Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն միջեւ փաստաթուղթի ստորագրումը», - հետադարձ հարց կ'ուղղէ Մարգետոնով:

Ռուս փորձագէտին կարծիքով դարբանեան կարգաւորման հարցով Ռուսաստան չէ կրցած վարուիլ այնպէս, ինչպէս Վրաստանի մէջ 2008-ին: Մայնստորֆեան հռչակագիրը այդ դէպքերուն արձագանգ էր, իսկ բանակցային գործընթացին մէջ բարեկամները չեն կրնար այդպիսին դիտարկուիլ բառի սովորական իմաստով: Կան շահեր, որոնք պէտք է հաշուի առնել:

«Միեւնոյն ժամանակ ակնյայտ է, որ առանց Ռուսաստանի Արեւմուտքը չի կրնար հաշտեցնել Հայաստանն ու Ատրպէյճանը, քանի որ կողմերը չեն համաձայնիր, նաեւ այն պատճառով, որ Արեւմուտքը չունի ստեղծուած փակուղիէն դուրս գալու հասկնալի սենար», - կ'ըզրակացնէ Մարգետոնով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԴԺԳՈՅ

Շարունակուած էջ 1-էն

րէին, օրինակ՝ Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակի ապագայ յստակեցումը:

«Խնդիրը նոյնիսկ տարածայնութիւնները չեն, այլ իրողութիւնն է, որ կողմերը մի քանի անգամ փոխած են իրենց դիրքորոշումները: Նման բան չեն ընել», - ըսած է ռուսաստանցի դիւանագէտը:

«Կոմերսանտ»-ի համաձայն, կազանի հանդիպման տապալումը կրնայ ուղղակի ազդեցութիւն ունենալ Տմիթրի Մեդվեդեւի խաղաղարար առաքելութեան ճակատագրի վրայ:

Կազանի մէջ սպասուող համաձայնութեան փոխարէն հրապարակուեցաւ միատեղ յայտարարութիւն, ու երեք երկիրներու նախագահներ արձանագրեցին, որ դադարեցան տագնապի կապակցութեամբ, «փոխըմբռնում ձեռք ձգուած է շարք մը հարցերու շուրջ, որոնց լուծումը կը նպաստէ Հիմնարար սկզբունքներուն հաւանութիւն տալու համար անհրաժեշտ պայմաններու ստեղծման»:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան հանդիպումէն ետք լրագրողներուն

յայտարարեց, «Կազանը բեկումնային չեղաւ, որովհետեւ Ատրպէյճանը պատրաստ չեղաւ ընդունել եռանախագահների կողմից առաջարկուած հիմնարար սկզբունքների վերջին տարբերակը»:

Ան չի շեցուց Ստրասբուրգի մէջ Հայաստանի նախագահի կատարած յայտարարութիւնը, որ կարելի է կազանի մէջ դրական արդիւնքներ եւ յառաջընթաց ակնկալել, եթէ Ատրպէյճան նոր փոփոխութիւններ չառաջարկէ:

«Կողմերի միջեւ վերջին երեք տարիների ընթացքում սա արդէն 12-րդ հանդիպումն էր: Բայց վերջին մէկ տարուան ընթացքում, այս սցենարը, երբ Ատրպէյճանը, փաստօրէն, նոր փոփոխութիւններով եւ առաջարկներով է հանդէս գալիս, արդէն առնուազն չորրորդ անգամ է կրկնուած: Սա է իրականութիւնը», - ըսաւ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը եւ աւելցուց. «- Բայց շարունակելու ենք բանակցութիւնները, որովհետեւ կարգաւորման համար այլ ճանապարհ չկայ: Միայն խաղաղ ճանապարհով, բանակցութիւնների միջոցով է հնարաւոր լուծել հիմնախնդիրը»:

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԸՆԿ. ՍԵՊՈՒՅ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ «14 ՄԱՐՏ»-Ի ՈՒԺԵՐՈՒ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵԶԻՆ

«14 Մարտ»-ի ուժերու համացանցային կայքէջին տրուած հարցազրույցի մը մէջ, Հայկական Համախոհական Պլոքի անդամ Երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան դիտել տուաւ, որ նոր կառավարութեան առջեւ պիտի կուտակուին անկանխատեսելի հետեւանքներ յառաջացնող միջազգային պատասխանատուութիւններ, եթէ աշխատանքային ծրագրին մէջ չնշուի Լիբանանի յատուկ միջազգային դատական ատենադուռ չհաստատուի անոր հանդէպ Լիբանանի յանձնառութիւնը: »Կառավարութեան հետ միջազգային ընտանիքի վարուելակերպը պիտի ճշդուի աշխատանքային ծրագրի հիման վրայ», ըսաւ Ընկ. Գալփաքեան:



հարցերը պիտի հետապնդենք ժողովրդավարական եւ կառուցողական միջոցներով՝ խորհրդարանին եւ պետութեան բոլոր հաստատութիւններուն մէջ», հաստատեց Ընկ. Գալփաքեան, աւելցնելով, որ 14 Մարտի ուժերը պիտի չմոլորին բռնի եւ բարբարոսական աշխատելու ճիւղին, որուն դիմած էին 8 Մարտի ուժերը, վերջին քանի մը տարիներուն ընթացքին, փակելով փողոցներ, հրկիզելով անիւներ, սպաննելով քաղաքայիններ եւ զրաւելով Պէյրութի կենսական կեդրոնները: «Մենք կ'ուզենք քաղաքակրթուած, անկեղծ եւ ուժեղ ընդդիմութիւն, որ ո'չ կը վախնայ, ո'չ ալ կը զիջի», նշեց երեսփոխանը:

Ան դիտել տուաւ, որ 14 Մարտի ուժերը կը բիւրեղացնեն մանրամասնուած աշխատանքային ծրագրի մը, դիմազրուակելու երկրի ծրագրի հանգրուանը: Ընկ. Սեպուհ Գալփաքեան նշեց, որ ինք կողմնակից չէ կառավարութեան վստահութեան քուէ շնորհելու նիստին՝ 14 Մարտի ուժերու մասնակցութեան գաղափարին, որովհետեւ դահլիճին մէջ ներկայ ըլլալը ինքնին կը նշանակէ քաղաքական առումով ճանչնալ ա'յն կառավարութիւնը, որ իշխանութեան հասած էր սեւ յեղաշրջումով:

«Միքաթիի գլխաւորած կառավարութիւնը օրինական չէ՛, մանաւանդ որ Լիբանանցիներուն աւելի քան 60 առ հարիւրը համաձայն չէ անոր դերակատարութեան: Հետեւաբար, անոր դէմ պիտի դնենք քաղաքականութեամբ, ու պիտի դիտարկենք գա'յն՝ իւրաքանչի'ւր հանգրուանին», վերահաստատեց Ընկ. Սեպուհ Գալփաքեան:

Ան հաւաստիացուց, որ 14 Մարտի քաղաքական ուժերը կառուած կը մնան Լիբանանի մէջ օրինաց եւ հաստատութիւններու պետականութիւն հաստատելու իրենց սկզբունքներուն ու կեցողութեանը, կոչ ուղղելով Միքաթիի կառավարութեան՝ յարգելու միջազգային որոշումները եւ դիմելու ինքնագաղտմի, որպէսզի պետութիւնը չճակատի համայն աշխարհին հետ:

«Այլապէս, միջազգային յանձնառութիւններէ խուսափումը պիտի սրէ լարուածութիւնը եւ հարուած հասցնէ երկրի կայունութեան», ըսաւ պետական երեսփոխանը:

Ընկ. Գալփաքեան ներկայ հանգրուանը նմանցուց 1999 թուականին երկրին մէջ տիրող իրավիճակին, երբ կազմուեցաւ կառավարութիւն՝ Սելիմ էլ Հոսի գլխաւորութեամբ եւ ռիսակալ քաղաքա-

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆՆԵՐՈՒ 96-ԱՄԵԱԿԸ ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՄԷՋ



Յունիս 14ին, Ուրուկուայի մէջ նշուեցաւ Հնչակեան 20 հերոս քաջամարտիկներու նահատակութեան 96-րդ տարելիցը:

Ս.Դ.Հ.Կ. վարիչ Մարմինի կազմակերպած հանդէսը տեղի ունեցաւ «Հնչակեան Տան» մէջ, ուր ներկայ էին Հայաստանի պատուաւոր հիւպատոս Ռուբէն Աբրահամեան, Հայ Առաքելական Եկեղեցուց առաջնորդ Տ. Յակոբ Արք. Գելլենտեան Հայ Կաթողիկէ վարդապետ Անթոնիո Գեչեճեան, ինչպէս նաեւ համայնքի կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ուրուկուայի եւ Հայաստանի քայլերգներուն կատարումէն յետոյ բացման խօսքով հանդէս եկան վարիչ Մարմինի անդամ՝ ընկերուհի Ժանէթ Գուրուսեան (հայերէն) եւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Տիէկո Գարամանուկեան (սպաներէն):

Օրհնութեան խօսքով հանդէս եղաւ Յակոբ Սրբազանը: Ան ըսաւ թէ յիշատակելով Հնչակեան Քսանները մենք վեր կ'առնենք անոնց համոզուածութիւնը քանի որ անոնք պատրաստ էին տալու ամէն ինչ հայ ժողովուրդի համար, նոյն իսկ իրենց կեանքը: Սրբազանը նշեց որ Քսանները հայոց Յեղասպանութեան առաջին զոհերն էին:

Ապա ելոյթ ունեցաւ օրուայ գլխաւոր բանախօս, արժանիքնահայ մտաւորական եւ մանկավարժ Փրոֆ. Պետրոս Հաճեան: Ան ըսաւ որ Հնչակեան քաններու նահատակութիւնը արժանի է համազգային նշումի, սկսած Հայաստանէն:

Զուգահեռներ կատարելով 1905-ի Քրիստափորի Սուլթան Հա-

միտի սպանութեան ծրագրին եւ Քսան Հնչակեաններու Երիտասարդ թուրքերու ղեկավարութիւնը ոչնչացնելու ծրագրներուն միջեւ, ան ըսաւ որ առաջին արարքը վրէժխնդրական էր, երբ արդէն ջարդերը տեղի ունեցած էին իսկ Քսան Հնչակեաններու ծրագիրը Յեղասպանութեան առաջ էր, ուստի տեղին է հարց տալ, ի՞նչ կրնար պատահիլ եթէ քանները յաջողէին:

Բանախօսի ելոյթը տեղւոյն վրայ սպաներէնի կը թարգմանէր բանասէր Յովհաննէս Պոտուքեան:

Մշակութային բաժինը ճոխացուց սրինգի վարպետուհի Էսդէր Գոյուսեանը, որ Քսաններէն Յակոբ Պասաճեանի ընտանիքի անդամ է:

Ս.Դ.Հ.Կ.ի անունով ելոյթ ունեցաւ վարիչ մարիմնի ատենադպիր ընկ. Լուիս Ապրազեան: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակցողներուն եւ հաստատեց Ս.Դ.Հ.Կ.ի պատրաստակամութիւնը, քաններու նման, նոր գոհողութիւններ կատարելու Հայրենիքին, Հայ Դատին, ազգապահպանման եւ ընկերային արդարութեան ձգտումներու իրագործման համար:

Ան ըսաւ որ Հնչակեան Կուսակցութիւնը ստեղծուեցաւ պայքարելու համար հայ ժողովուրդի իրաւունքներուն ի նպաստ: Հետեւաբար, Կուսակցութիւնը չի հետեւիր այլոց ծրագրներուն, որոնք կը կիրառեն բաժնէ որ տիրեսի սկզբունքը:

Ս.Դ.Հ.Կ.ի քայլերգի երգեցողութեամբ հանդիսութիւնը հասաւ իր աւարտին:

կանութիւն վարեց նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի դէմ: «Սակայն վերջինս աւելի ուժով վերադարձաւ 2000-ի խորհրդարանական ընտրութիւններուն: Հետեւաբար, միւս խմբաւորման կոչ կ'ուղղենք լաւ կարգալու պատ-

մութիւնը եւ դասեր քաղելու անցեալի փորձերէն, փոխան շարունակելու այս ռիսակալ քաղաքականութիւնը՝ Լիբանանի անկախամէտ ուժերուն դէմ», եզրափակեց պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան:

ՀԱՅԱՍՏԱՆ ՄՏԱՅՈՒՄԻՍ ԶԷ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄՏԱՅԱԾ C-300 ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՎ

Շարունակուած էջ 1-էն

նի Դաշնութեան տեսանկիւնից Ատրպէյճանին C-300 համալիրի վաճառքը ձեռնարկուած է, որովհետեւ արդէն քաղաքականացուած է եւ, առաջին հերթին՝ Ատրպէյճանի կողմից», - շեշտեց Տոնոյեան՝ պարզաբանելով. - «Բուն ռազմական տեսանկիւնից

այդ համալիրը չի սպառնում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգութեանը այն պարզ պատճառով, որ դա հակաօդային պաշտպանութեան համալիր է եւ կրում է պաշտպանական բնույթ: Իսկ ո'չ Հայաստանի Հանրապետութիւնը եւ ո'չ էլ Լեռնային Ղարաբաղը չեն պատրաստուած ռազմական գործողութիւններ սկսել Ատրպէյճանի դէմ»:

« PARADISE LOST »/« ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԱԼ »

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

Վերոյիշեալ խորագիրով «Paradise Lost» երկու գրքեր կան հրատարակուած: Այս երկու նոյնանուն գրքերը գրուած են երկու տարբեր հեղինակներու կողմէ, երկու տարբեր ժամանակներու մէջ եւ իրարմէ հիմնովին տարբեր բովանդակութիւններով:

Առաջինը՝ բանաստեղծութիւններու հաւաքածոյ մըն է, գրուած՝ մօտաւորապէս չորս հարիւր տարիներ առաջ (1630-ական թուականներուն), անգլիացի անուանի բանաստեղծ՝ John Milton-ի կողմէ: Ծան Միլթըն գրած է նաեւ այլ բանաստեղծական երկ մը՝ «Paradise Regained»/«Դրախտ Վերաշահեալ» վերնագրով:

Երկրորդը պատմական, բանասիրական եւ վիճակագրական գիրք մըն է, գրուած՝ ամերիկացի պատմագիր եւ պատմագէտ Giles Milton-ի կողմէ, 2008 թուին:

Զարմանալի գուզադիպութեամբ մը ակնարկուած երկու գրքերը կը կրեն նոյն խորագիրը՝ «Դրախտ Կորուսեալ»: Նոյն են նաեւ անունները երկու հեղինակներուն՝ Միլթըն:

Ես յատկապէս կը փափաքիմ անդրադառնալ երկրորդ գրքի՝ Giles Milton-ի «Paradise Lost»-ի հատորի մասին:

«Paradise Lost»ը հրատարակուած է 2008 թուին, Նիւ Եորքի Perseus Books Group հրատարակչութեան կողմէ: Գիրքը կը բաղկանայ 426 էջերէ եւ կը պարունակէ նաեւ պատմական շատ կարեւոր նկարներ:

Գրքին հեղինակը շատ արդարացի բնորոշումով՝ «Ճշմարիտ Դրախտ»-ի մը կը նմանցնէ Չմիւռնիա (ներկայիս անուանեալ Smyrna (Իզմիր) քաղաքը իր արուարձաններով:

Շուրջ դար մը առաջ եւ աւելի՝ Չմիւռնիա Փոքր Ասիոյ կամ արեւմտեան Անատոլիայի մեծագոյն քաղաքն էր, նոյնիսկ աւելի մեծ էր այն օրերուն՝ քան Պոլիսը (Իսթանպուլ):

Չմիւռնիան չորս հազար տարիներու հնութիւն ունեցող քաղաք էր, հիմնուած Եգէական ծովու ափին: Հակառակ անոր որ Չմիւռնիան աւելի քան երեք դարէ ի վեր կը գտնուէր թուրք իշխանութեանց տիրապետութեան ներքեւ, եւ սակայն միշտ եղած էր շրջանի մեծագոյն քրիստոնէայ քաղաքը: Այդ պատճառով ալ թուրքերը «Կեաւոր Իզմիր» կ'անուանէին Չմիւռնիան:

Չմիւռնիա իր արուարձաններով առաջին աշխարհամարտի վաղորդացին ունէր շուրջ երկու միլիոն բնակչութիւն: Այս բնակչութեան աւելի քան մէկ միլիոնը յոյներ էին, քառորդ միլիոնը՝ հայեր, հարիւր հազար էր հրեաներու թիւը, հարիւր հազար էր թուրքերու թիւը, մնացեալները այլ եւրոպական քրիստոնէաներ էին:

1916 թուին, Չմիւռնիայի մէջ բնակող յոյներուն թիւը կրկնապատիկ աւելի էր, քան՝ յոյներու թիւը Աթէնքի մէջ:

Անգլիական թրքամէտ քաղաքական դիւանագիտութիւնը ճիշդ այն եղանակով որ հրագրինց Գեմալ Աթաթուրքը, եւ Կիլիկեան գրաւեց Փրանսացիներէն եւ հայերէն՝ նոյն թրքանպատ քաղաքականութեամբ, Անգլիա գինական լայն օժանդակութիւն ընծայեց Գեմալ Աթաթուրքին որպէսզի թուրքերը Չմիւռնիան գրաւեն յոյներէն, հայերէն եւ այլ քրիստոնէայ տարրերէն:

Յոյն ուժեր չորս տարի մաքառեցան թրքական բանակներու դէմ, որոնց միակ մտադրութիւնն էր՝ բնաջնջել յոյն, հայ եւ քրիստոնէայ այլ տարրերը որպէսզի ամբողջապէս տիրանան Չմիւռնիայի եւ թրքացնեն զայն:


Քեմալ Աթաթուրքը գործի լծեց գինեալ ոճրագործ թուրք գինուորագրեալներ, որոնք գինու գորութեամբ մտան քաղաք: Անոնք նախ յարձակեցան հայկական թաղամասերու վրայ: Նախապէս շուրջ 150,000 հայեր տեղահանուած էին արդէն Իզմիրէն եւ իր արուարձաններէն, բայց տակաւին Չմիւռնիոյ մէջ կ'ապրէին աւելի քան հարիւր հազար հայեր:

Չմիւռնիոյ մէջ հայեր ունէին 20 հայկական թաղեր, բացի առաջնորդանիստ մայր տաճարէն՝ հայեր ունէին նաեւ 16 Հայ Առաքելական, երկու Հայ Կաթողիկէ, եւ մէկ Հայ Բողոքական եկեղեցիներ:

Թուրք գինուորներ մտան հայ տուներէն ներս, սպաննեցին այրերը, բռնաբարեցին մատաղատի հայ աղջիկները եւ մնացեալ հայերը տեղահան ըրին:

Այս նոյն ոճրագործ կեղեքումները թուրք գինուորներ աւելիով գործադրեցին նաեւ յոյն բնակիչներուն վրայ:

Թուրք խուժանը սպա կրակի տուած ամբողջ քաղաքը: Հարիւր հազարաւոր տուներ եւ նոյնքան թիւով հանրակացարաններ հրոյ ճարակ դարձան: Հրոյ ճարակ դարձան նաեւ շատ մը անպաշտպան բնակիչներ:



Աւելի քան մէկ միլիոն բնակիչներ, մեծ մասամբ յոյներ, կորսնցուցին իրենց բնակարանները:

Ահաւոր եւ անագորոյն հրդեհը մոխրացուց ամէն ինչ: Ահաղ, նաեւ անթիւ անմեղներ մահացան հրկիզումէ:

Կէս միլիոն անտուն յոյներ ծովափ խուժեցին նաւեր, լաստեր որոնելու, որպէսզի իրենց կեանքը կարենան փրկել: Անոնցմէ շատեր ծովամոյն եղան:


Յատկանշական է որ ծովափին կանգնած կային 21 անգլիական նաւատորմիղ նաւեր: Կար նաեւ ամերիկեան նաւատորմիղը: Այս նաւատորմիղներու հրամանատարները ակնատես կ'ըլլային տեղի ունեցող այս ահաւոր ողբերգութեանց եւ կատարելապէս անտարբեր կը մնային:

Ընդհակառակը՝ անգլիական նաւատորմիղի հրամանատարները կ'արգիլէին որ որեւէ օգնութիւն ընծայուի մահուան սպառնալիքին ենթակայ այդ աղէտեալներուն:

Ամերիկեան նաւատորմիղի հրամանատարը՝ Mark L. Bristol, հետեւելով անգլիական նաւատորմիղի ղեկավարներուն, ոչ մէկ օգնութիւն ընծայեց ծովամոյն դառնալու վտանգին տակ գտնուող յոյն աղէտեալներուն: Աւելին՝ ամերիկեան նաւատորմի հրամանատար Mark L. Bristol հրամայեց նաւու Band Leader-ին (նուագախումբի ղեկավարին)՝ բարձրաձայն երգեր եւ նուագներ հնչեցնել՝ որպէսզի չլսուին աղիողորմ լացերն ու ճիչերը՝ անտուն դարձած յոյն թշուառ մայրերու, մանկամարդ աղջիկներու եւ մատաղատի մանուկներու, որոնցմէ ոմանք ծովամոյն կ'ըլլային ու կը մահանային անգլիական նաւատորմիղի հրամանատարներուն անկարեկիտ աչքերուն առջեւ:

Թուրք գինուորներ անվերջ շարունակեցին իրենց բռնարարքները եւ Չմիւռնիայի մէջ ու շրջակայքը գտնուող շուրջ 350,000 յոյները եւ հայերը քշեցին թուրքիա ի սորերը, որոնք մեծ մասամբ սպաննուեցան, մահացան եւ կամ անհետացան:

Չմիւռնիայի ամերիկեան հիւպատոս George Horton ակնատես եղած էր թէ ինչպէ՞ս մարդակերպ



հրէջ թուրք գինուորականներ՝ ամենէն անմարդկային խենեշութիւններով սպաննեցին 150,000 յոյներ եւ հայեր Չմիւռնիայի մէջ:

Ան խորապէս ցնցուած էր եւ տառապած որ Ամերիկեան Հէր միջամտած կասեցնելու համար կատարուող այդ ահաւոր եղեռնագործութիւնները:

Ամերիկայի հիւպատոս՝ George Horton նաեւ յայտարարած էր, որ ի տես Չմիւռնիայի կործանման եւ բնակչութեան բնաջնջման, «ամենասարսուղագրեցիկ» տպաւորութիւնը որ ան զգացած էր՝ «ամօթ»-ի զգացումն էր:

«Մարդկային ցեղին պատկանելիութեան ամօթի զգացումը», ըսած էր ան:

Արդարեւ, համաշխարհային պատմութեան մէջ երբեք չէ պատահած որ մարդկային ցեղ մը՝ այլ ազգութեան պատկանող բազմամարդ քաղաք մը հրդեհի մատնէ: Վառէ-այլի բոլոր բնակարանները եւ բնաջնջեց բոլոր բնակիչները: Այս անմարդկային ոճիրն է որ Չմիւռնիա քաղաքի վրայ գործադրեցին թուրք իշխանութիւնները 1922 թուին: Ինչպէս որ նախապէս նոյնը գործադրած էին Հայաստանի մէջ:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԲՈՒՆԱԳՐԱՒՈՒՄԻ ԵՒ ՅՆՆԱՊԱՊԱՆՈՒԹԵԱՆ

Այս էջերով իմ ներկայացուցած նկարագրութիւնները՝ ջնջին մէկ մասն են միայն Giles Milton-ի «Paradise Lost» գրքի ամբողջութեան:

Թուրք իշխանութեանց կողմէ Չմիւռնիայի կործանումը եւ անմեղ յոյն ժողովուրդի բնաջնջման անմարդկային ողբերգութիւնը, Յեղասպանութեան Համագործակցութիւնը Մըն էր: Յար եւ նման Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ բռնագ-

Մար. ք էջ 18

Advertisement for Bedros S. Maronian and Siamanto B. Maronian, insurance agents. Includes contact information (818/500-9585, 818/269-0909), office addresses in Los Angeles, Glendale, and Pasadena, and a list of services like Life Insurance, Estate Planning, and Health Insurance. Features the A.B.A. Insurance Services logo and a cartoon illustration of a man in a suit.

**ARMENIAN
COMMUNITY
COALITION**
of Pasadena



PRESENTS


4th Annual

Armenian Identity

FESTIVAL

SUNDAY JULY 31, 2011

12:00PM-8:00PM VICTORY PARK
2575 PALOMA STREET, PASADENA



CO-SPONSORED BY:

THE CITY OF PASADENA

**CELEBRATING PASADENA'S
125TH ANNIVERSARY**

FOOD • LIVE MUSIC • BOOTHS

CHILDREN'S ACTIVITIES

FREE ADMISSION • FREE PARKING

ARMENIAN COMMUNITY COALITION OF PASADENA

P.O. BOX 70548 • PASADENA, CA 91117

(626) 399-1799 • pcccoalition@gmail.com • www.acc-us.org

ԻՐԱՔԱՅԱՅ ԳԱՂՈՒԹՆ ԱՅՍՈՐ

Քանի մը շաբաթէ ի վեր հիւրաբար Լոս Անճելըս կը գտնուէր Իրաքահայութեան կորովի առաջնորդ Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան:


Իր հետ ունեցած հանդիպման մը ընթացքին իմացանք թէ սրբազանը 31 տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ Պաղտատի մէջ, իբրեւ առաջնորդ Իրաքի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ:

Ցաւալի էր իմանալ իրմէ որ Իրաքի երբեմնի բարգաւաճ հայ գաղութն սկսած է թիւով նօսրանալ: Արդարեւ, շուրջ քսան տարի առաջ եթէ Իրաքի հայութիւնը 35 հազար հոգի կը հաշուէր, այսօր այդ թիւն իջած է 18,000-ի:

Արտագաղթի տուն տուող պատճառները բազմազան են: Գլխաւոր պատճառը վերջին տարիներու քաղաքական անպահով վիճակն էր: Արդարեւ մօտ 300 ընտանիք հաստատուած են Հայաստանի մէջ: Ուրիշներ գաղթած են Սուրիա, Հոլանտա, Եւրոպական այլ երկիրներ եւ Միացեալ Նահանգներ:

Պաղտատի մէջ ներկայիս կը գործեն հայկական տարբեր կազմակերպութիւններ՝ Հ.Բ.Լ.Մ., Հայ Երիտասարդաց, Հ.Մ.Ը.Մ., Տիկնանց կազմակերպութիւնը եւ ուրիշներ:

Իրաքի բովանդակ տարածքին ներկայիս կը գործեն ութ հայկական եկեղեցիներ: Անոնցմէ իւրաքանչիւրն ունի իր տեղական ծուխն ու քահանան: Բացի մայրաքաղաք Պաղտատէն՝ հայեր կը բնակին նաեւ Պասրա, Քէրքուք, Ջախօ, Մուսուլ, Աւզրոմ, Հավրէս եւ Տը-



Տոգ քաղաքներուն մէջ:

Պաղտատի առաջնորդարանին կը պատկանին ազգապատկան հաստիքներ կալուածներ, որոնք կտակուած են ժամանակին մեծահարուստ բարերարներու կողմէ: Սակայն, երկրէն ներս տիրող քաղաքական եւ տնտեսական անկայուն կարգավիճակին պատճառով, վարձակալներէն շատեր կը վարանին իրենց պարտքերը վճարելու: Այսուհանդերձ՝ հայ գաղութը ողբերգական ցնցումներէն հեռու մնացած է բարեբախտաբար...:

Իրաքի քրիստոնեայ տարբեր համայնքներն ու յարանուանութիւններ ունին իրենց ներքին (էքիմէնիք) կազմակերպութիւնը, որուն քարտուղարն է տեղւոյն Հայաստանեայց Եկեղեցւոյ այժմու առաջնորդ՝ Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան:

ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ՉԱՐԻ ՎԵՐՉԸ»



Հայ Քոյրերու վարժարանի 25 ամեակի ձեռնարկներու շղթային եկաւ միանալու աննախընթաց գեղեցիկ եւ հաճելի երգախառն թատերական երեկոյ մը:

Ուրբաթ, 18 Յունիս 2011ին երեկոյեան Հայ Քոյրերու վարժարանի «Դանիէլեան» սրահէն ներս ներկայացուեցաւ Յովհաննէս Թումանեանի «Չարի վերջը» մանկական հեքիաթը օբերայի վերածուած՝ հայրենի երաժիշտ Վահէ Հայրապետեանի կողմէ, «Ղերասանները» Հինգերորդ եւ վեցերորդ դասարանի աշակերտները, պարուստաց՝ Գաթրին Հայրապետեան, եւ Ղեկավար՝ վարժարանի երաժշտութեան դասատու՝ Վարդուհի Պաղտասարեան:

«Չարի վերջը» հեքիաթը Յովհաննէս Թումանեան գրած է 1908ին եւ Գալանտեան Ն.Գ. գայն վերածած է Մանկական Օբերայի 1 գործ, ապա Մանուկեան Ա. Մ.

մանկական օբերայի վերածած է 3 գործ, Երեւան 1958 թուականին, մէկ անգամ միայն բեմադրուած է որպէս օբերա 1950ական թուականներուն:

Վեցերորդ դասարանէն Ռաբէլ Ղուկասեան եւ հինգերորդէն՝ Կարէն Քէչէճեան ներկայացուցին Յովհաննէս Թումանեանի «Չարի վերջը» նիւթը եւ նախապատրաստեցին ներկաները դիտելու եւ վկայելու ամերիկացի հայ պատանիներու հիանալի բեմական շնորհքները: Գլխաւոր աղուէսի դերը ստանձնած էր Քրիստինա Գալուստեանը, ագուալի դերը՝ Սթեֆընի Գիլէճեանը, Հաւիկ մամիկը՝ Թալիա Սողոմոնեանը:

